Զը ոչտոք է մոռանանք, որ կանոնաւոր գրութիւնը մեծ մանկավարժական նշանակութիւն ունի՝ ուսուցանելով երեխաներին դիտել, համաչափել, ընտելացնելով նրանց կանոնաւորութեան։

Վերջացնում եմ հաղորդելով, որ բժշկան ճեմարանում այս տարի աւարտեցին վեց հայ ներկու վրացի։

Բզնունի

ՆԱՄԱԿ ԱԳՈՒԼԻՍԻՑ

Իմ առաջի նամակում խօսելով Ագուլիսի բուսականութեան վրայ՝ բացէի թողել ամենագլխաւորը, այն է խաղողը, որպէս զի յետոյ առիթ ունենամ խօսել դորա վրայ աւելի մանրամասն։

Ագուլիսում խաղողը հաւաքումեն սեպտեմբերի վերջերին կամ հոկտեմբերի մէջերում։ Բայց ժողովելուց առաջ խաղողի համնում ժամանակ մի քանի անգամ հարթողեն անում, այսինքն որթերի բաղմաթիւ տերևները պակսեցնումեն, որ մի դուցէ խիտ լինելով արգելք լինէին արևի ճառագայթներին թափանցել խաղողի մէջ, վասն զի ողկոյզները պատուագից *) կախ լինելով՝ վերևից ծածկուած են տերևներով։ Ամենաբնտիր խաղողը պահում են ձմեռուայ համար, իսկ մնացածներից գինի են քամում, որի հոտմար յետոյ կասեմ։

Առաջուայ տարիներին՝ մինչև 1861—62 թ. թ. մեծ առատութեամբ խաղող էր լինում. իսկ յետոյ տակաւ առ տակաւ խաղողի քանակութիւնը սկսեց նուազել և ոչնչանալ։ Իւրաքանչիւր անգամ խաղողը կամ չօռից **) էր փչանում և կամ թէ ցրտից։ Վերջինիս առաջը դեռ կարողանում էին առնել. մի քանի տարի շարունակ աշնան վերջերում որթի ծառերը պատուագից վեր էին բերում ու հողի տակով անում. իսկ գարնան կրկին պատուագի վրայ բարձրացնում, որ ի հարկէ շատ դժուարութիւն, աշխատանք և դրամ էր պահանջում և մի և նոյն ժամանակ շատ ծախս էր դուրս գալիս։ Իսկ ինչ որ վերաբերում է առաջինին՝ ճար չկար առաջը առնելու. ժանտախտի նման մի բան է, որ բռնում է խաղողը, քանի մի չաբաթից յետոյ մէկ էլ էն ես տեսնում, որ խաղողի ողկոյզները չորացած, մոխրի դոյն ստացած, միով բանիւ անպիտան բան են դառել։ Թէև ոմանք փորձեր էին փորձում ջոկովի քացախ չինել—բայց ի զուր էդպիսի քացախը անշէր էր լինում և երկար էլ չէր մնում։

Առատութեան տարիներին այնպէս լաւ խաղող էր ստացվում Ագուլիսում, որ մերձակայ տեղերից (օրինակ Նախիջևանից) գալիս էին խաղող կամ գինի առնում. այն ինչ ներկայումս Ագուլեցիք զուրկ լինելով իրանց ջղեցիկ, հիւթալի խաղողից՝ ստիպուած են օտար տեղերից (Հին Նախիջևանից, Աղդարուից) առնել։ Բայց վերջի տարիներիս 1870, 71, 72, թ. թ. առատութեան նայելով՝ կարծումես թէ անցեալը յարութիւն է առնում։

Գինի քամելու համար այգեպէրները իրանց այգիներում կամ թէ չէ հէնց նստում տանը հրնձան են շինում։ Հնձանը մի սենեակ է, որ ցածր որմով երկու մաս է բաժանած. վերի մասի յատակը, ուր պիտի ածեն խաղողը փոքրիկ քարերով և կիրով շինումեն տափարակ, ողորկ, սահուն ու փոքր ինչ դառ ի վայր և ապա եղով օծում, իսկ սորա շրջակայ պատերը 2—3 գաղ բարձրութեամբ միայն կիրով սուաղումեն ու եղով օծում։ Լոխտալու խաղողը ածումեն այստեղ և միւս օրը մի մշակ ոտները մինչև ծնկերը վեր քաշած բարձրանում է խաղողի դէզի վրայ և սկսած մի ծայրից կամաց կամաց կոխ է տալիս։ Նոր գինին՝ չիքան, որ շատ քաղցր է լինում մեղմ հոսանքով պատի միջին դրած խողովակով թափվում է ներքև շինած փոսի մէջ, որ նոյնպէս կիրով սուաղուած է ու իւղով օծուած։ Երբ փոսը բաւական լցվում է ամաններով ածումեն տակերի մէջ և ջորիներով կրում տուն՝ թափում կարասների մէջ։ Իսկ ինչ որ վերաբերում է մնացածներին՝ ճնճին, այն էլ մի քիչ ածումեն գինու կարասների մէջ և մնացեալներից օղի են քաշում։ ***) Շիրան կարասների մէջ սկսում է եփ գալ ու փրփրել. այս փրփուրը մի քանի անգամ քաշումեն մինչև որ չիրան հանդարտում է, կրցնում է իւր առաջուայ թէ պղտոր դոյնը և թէ քաղցրութիւնը և դառնում է պայծառ սեագոյն կամ կարմրագոյն գինի. այնուհետև կարասների բերանը ծեփումեն և թողնում առ ժամանակ։

Խաղողները զոյն զոյն են լինում. բայց գըլխաւորապէս լինումեն սև ու սպիտակ։ Սոցա իւրաքանչիւր տեսակը մի անուն ունի. չաֆեյի, սվրոկի, չաքարի, սերկևելի, խաբուն-բարմակի և այլն։

Ս. Յ. Սաֆրազեանց։

ՆԱՄԱԿ ՂԶԼԱՐԻՑ

Ղզլարի բնակիչները.—Հայեր։ Տիրապետող լեզուն սարին և միջին դասերում հայերէնն է։ Սարին դասը սերտ կապուած է իւր մայրենի լեզուի, նորա բոլոր առանձնութիւնների, ազաւաղութիւնների, առածների, զրոյցների ու առակների հետ, որոնք նա բերել է իւր հայրենիքից և յաջորդաբար աւանդում է իւր յետնորդներին։ Այստեղի բարբառի գլխաւոր տարբերութիւնը կազմում են բայերի և մանաւանդ կատարեալի վերջաւորութիւնները (ասամ-ար-աւ, ասանք-աք-ան) և կոչտ բաղաձայնների փափկացնելը (կալ-գալ, կնալ-գնալ, ձէն-ձայն և այլն) իրրև օրինակ կարող են ծառայել այս տողերը ժողովրդական երգերից։

„Բաղերին դրաւ խոխաւ (Այդինները եղիամն պատեց)

„Եաղրաղը թամրաքու դառաւ (Տէրը ծխախոտ դարձաւ)

Միջին դասը նոր առարկաներին առաջին անգամ ոտար լեզուի միջնորդութեամբ ծանոթանալով և մի առանձին ձգտումն ունենալով որքան կարելի է շատ խառնել օտար բառեր իւր խօսակցութեան մէջ, հասցրել է լեզուն սարսափելի աղաւաղութեան։ Բառերի համարեա կէսը օտար ազգի է։ Այստեղ շատ կարելի է լսել այսպիսի նախադասութիւններ. „Էսքան бочка отправить արաւ եարմունկա (арматрик)" կամ „Ողրմա оправдаться իլի через ինձանով"։

Բարձր դասի մէջ բոլորովին հալածուած է մայրենի լեզուն։

Կրօնասիրութիւնը յատկանիշն է Ղզլարեցու։

Այստեղ կայ երկու եկեղեցի քաղաքի մէջ մինը Աստուածածնայ, իսկ միւսը Լուսաւորչի անունով։ Վերջինս առաւել նոր է և հայկական չինուած պատած է պարսպով և բակումը ունի պարտէզ։ Քաղաքից դուրս կայ նոյնպէս երկու եկեղեցի. մինը սուրբ Գէորգայ անունով. չինած է անտառի մէջ թերևի ափին և համարվում է ուխտատեղի, միւսը գերեզմանատան է։ Ժողովուրդը առ հասարակ մեծ համարումն ունի դէպի հոգևորականները, թէպէտ սոցանից ոմանք դժուարանում են հասարակ ընթերցանութեան մէջ։ Քահանայ քարոզիչ Ղզլարը համարեա երբէք չէ տեսնում իւր մէջ։

Հեռաւոր երկիրներից եկած մի քահանայ ստորագրութիւն բանալով իւր անձնական օգտի համար հարիւրներ է դուրս տանում այստեղից, մինչ շատ իսեղճեր նոյն իսկ քաղաքի մէջ զոհ են լինում կարօտութեանը և ոչոք ուշադրութիւն չէ դարձնում նոցա վերայ։ Ղզլարը պատկանում է Հաչտարխանու հոգևոր վիճակին. այստեղ նստում է մի յաջորդ վարդապետ։

Լուսաւորութեան մակերևոյթը ընդհանրապէս շատ ստոր է։ Մինչև վերջին տարիներս Ղզլարը չունէր իւր պիտոյքներին լիապէս համապատասխանող ուսումնարան։ Սորին դասի մանուկները անխնամ շրջումէին փողոցներում և իւրեանց անհանգստութեամբ կազմում էին հասարակութեան պատիժը, մինչև որ հասակը ներումէր նոցա դառնալ մշակներ, մանրավաճառներ կամ գիւղացիներ։ Ամենայն ինչ վերջում էր բոլորովին աւելորդ բան։ Բարձր և միջին դասերի մանուկները ուղարկվում էին նահանգական ուսումնարանը, որ շատ աննախանձելի դրութեան մէջ էր, իսկ ոմանք նոցանից ուղարկվում էին Մոսկուայի, Թիֆլիզի, Ստավրապոլի և այլն գիմնազիաները կամ բարձրագոյն ուսումնարանները, բայց նոքա վերադառնալով ըստ մեծի մասին արտայայտում էին իւրեանց գործունէութիւնը միայն արտաքին ձևերի մէջ։ Ոմանք միայն բացում էին փոքրիկ ուսումնարաններ, ուր ուսուցանում էին հայերէն և ռուսերէն կարդալ-գրել։ Ահա քանի մի տարի է, որ Ղզլարը ունի տղայոց ուսումնարան, որի երրորդ տարեդարձը հանդիսաւոր կերպով կատարեցին նորերումս, նոյնպէս և օրիորդաց ուսումնարան, որոնք պահպանվում են եկեղեցական գումարներով և ժողովրդի կամաւոր նուիրատվութեամբ։ Պէտք է նկատել, որ ժողովուրդը բաւական համակրում է նոցա և գատիկ ու ծննդեան երեկոները բաւական գումար է հաւաքում յոգուտ նոցա։ Բացի դորանից իւրաքանչիւր տարի Հայերից, ինչպէս և միւս ազգութիւններից որոշեալ թիւով ուղարկվում են մանուկներ Վլադիկովկազի արհեստական ուսումնարանը։ Դոցա մէջ կրթվում է մանուկ սերունդը, իսկ ամբոխը ընկղմուած է տգիտութեան և սարսափից անբաժան ընկերակից խորին մոռոտապաշտութեան մէջ։ Եթէ հաւաքենք այն բոլոր գերբնական պատմութիւնները, որոնց ստեղծել է նորա վառ երևակայութիւնը, մի ամբողջ հատոր կը կազմուի։ Նա մասամբ բերել է նոցա իւր հայրենիքից, մասամբ շարադրել է ինքը և մասամբ ընդունել է իւր շրջապատողներից։ Վերջիններիս կարգումը կարելի է համարել հաւատալքերի (русалка) գոյութեան։

Հասարակական կեանքը զարգացած չէ, ամէն մարդ իւր համար է ապրում։ Միայն կարգ դուրս երևոյթների համար հրաւիրվում են քաղաքիրը դէպի ընդհանուր ժողով. (сходка) բայց և այնտեղ հասարակութիւնը ըստ մեծի մասին գնում է իրրև յոկ հանդիսական և ոչ իրրև ջերմ մասնակցող անդամ։

Դորա հակառակ զարգացած է ընտանեկան կեանքը, մանաւանդ ստորին և միջին դասերում։ Ուր ընտանիքը կազմում է գերդաստանի նախադահի հօր անմատչելի թագաւորութիւնը, որի չորս պատից երբէք չեն դուրս թրչում ճնչուած կնոջ կամ գերդաստանի այլ անդամների հառաչանքը, որովհետև նոքա պատած են ամօթխածութեան պարսպով։

Ա. հասարակ կնոջ դրութիւնը այստեղ շատ աննախանձելի է։ Այդ երևոյթը անտարակոյս կապ ունի ժողովրդի զարգացման հետ, բայց և միւս կողմից դա հետևանք է այն հանգամանքի որ կանայքը չունեն արտադրական աշխատանք, թէպէտ նոցա վզին է բոլոր ընտանեկան ծառայութեան հոգսը։ Նա ստանում է իւր ապրուստը մարդից իրրև ողորմութիւն, և դորանով կարծես աւելի հաստատվում է վերջինիս հրամանատարութիւնը, իրաւունքը, որ նրան աւանդուած է իւր նախորդներից։

Ասածներիս հաստատութեան համար կարող ենք բերել այն փաստը, որ մերձակայ Թուսայ գիւղերում, ուր մարդու և կնոջ դերերը փոխուած են, այսինքն կինը կատարում է բոլոր դաշտային աշխատանքը, վարում է երկիրը, փայտ է բերում քաղաք վաճառելու և այլն, այնտեղ ընդհանրապէս աւելի այրը կախումն ունի կնոջից, քան թէ սա նորանից։

Ժողովուրդը ընդհանրապէս աշխատասէր է։ Թէպէտ ամենքի երեսին նկարուած է կարօտութեան հոգսը, բայց և զուրկ չէ այն բանաստեղծական կողմերից, որոնք յատուկ են գինուէա երկիրների բնակիչներին։ Նա ունի ժողովրդական երգեր, որոնցից շատերը հետաքրքիր են թէ իրրև ճիշդ նկարագիր տեղական կեանքի և թէ իրրև մաքուր օրինակ այստեղի բարբառի։

Բացի Ղզլար քաղաքից, Հայեր կան և շրջակայ գիւղերում, որպիսի են Սուրբ Խաչ կամ Մաջառ, Ղարաջավլու և այլն։ Մաջառ գիւղում խօսում են մի բոլորովին անծանօթ լեզուով, թէպէտ դիտեն և հայերէն։

Այրանս Հայերի համար։ Միւս նամակում կաշխատեմ խօսել Ղզլարանակ միւս ազգերի մասին։

Մի Ղզլարեցի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրումեն Բագուից որ այդ քաղաքում դիտաւորութիւն կայ հրատարակել մի հայոց ամսագիր։ Մենք կարծում ենք, (և սորա մասին ուրիշ անգամ կը խօսենք) որ գաւառներում աւելի ձեռնտու է տեղական փոքրիկ շաբաթական թերթ, քան թէ ամսագիր, այնպիսի թերթ, որ պարապէր զլխաւորապէս բոլորովին տեղական խնդիրների մշակութեամբ և տեղական ոգի ունենար,—այն ժամանակ, նա օգտաւէտ կը դառնայ թէ այն գաւառական քաղաքի համար, թէ մեզ համար։ Մի և նոյն ժամանակ, նա զուրկ չը դիտի լինի թերթ, դիւրամարս ընթերցանութիւնից։

* *

Մենք ստացանք Վ. ան քաղաքից գալու 1873 թուին հրատարակվելու շաբաթաթերթի յայտարարութիւնը։ Սա է հին „Արծիւ Վասպուրականի" նորոգված հրատարակութիւնը։ Խմբագիրը պ. Մանուէլ Աճառեանցն է, որ պ. Սանասարեանի հաշվով ուսել է Գերմանիայում։ Ցանկանում ենք աջողութիւն մեր եղբայրակցին։

* *

Նորին Կայսերական Բարձրութիւն թագաժառանգը, որ շարունակ ստացվող պաշտօնական տեղեկութեանց նայելով, բաւական ծանր հիւանդ էր,—այժմ օրէ ցօր լաւանում է։

* *

Նոյեմբերի 21-ին Մոսկվայի գաւառի Եասնէվկի վիճակի մէջ իր գործունէութիւնը սկսեց նոր բացած գիւղական փոխատու և խնայողութեան ընկերութիւնը։

* *

Դեկտեմբերի 27-ին, հաւաքվեցաւ Թիֆլիսի քաղաքային վարչութեան ղահլիճում մի մանուաժողով գաղի լուսաւորութեան և ջրանցքի խնդիրը քննելու համար։ Քաղաքացիք իրանք կամենում են ջրանցքի և գաղի լուսաւորութեան համար բաժանորդների ընկերութիւնը հիմնելու, բայց մի և նոյն ժամանակ, ինչպէս երևում է, հակված չեն մի սկզբնական գումար հաւաքելու տեղի նախապատրաստական հնարաւորութիւնները անելու, պրօեկտը չինելու, և բաժանորդական ընկերութեան հիմնելուն հարկաւոր մայրագումար որոշելու համար.... Որոշվեցաւ քանի մի ազդեցութիւն ունեցող անձանց միջոցով ստորագրութեամբ հաւաքել մի գումար նախապատրաստական աշխատութիւններին ձեռք տալու համար։

* *

Ռուս Голосъ լրագիրը ստացաւ առաջին պաշտօնական նախազգուշութիւնը։

* *

Голосъ լրագիրը լսել է, որ գինուորական գիմնազիաները պիտի ենթարկվեն փոփոխութիւններին։ Ինչպէս յայտնի է սոքա փակ ուսումնարաններն էին և մատչելի էին միայն հասարակութեան արտօնացած դասերին։ Աչքի առաջն ունենալով ընդհանուր գինուորական պարտաւորութեան օրէնքը, կամենում են այժմ մատչելի անել ամէն դասերին միջին կարգի ուսման կրթութիւնը։

* *

Թիֆլիսի ամբողջ հայ-հասարակութիւնը գիտէ, որ դեռ Մաթէոս կաթողիկոսից մի կօնդակ տրվեցաւ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեանը, Վանքի Մայր եկեղեցու գիմաց գտնվող դարդակ հողի վերա Ներսիսեան դպրոցի համար մի յարմար շինութիւն կառուցանել։ Թիֆլիսի հասարակական կարծիքը վաղուց գիտենալով այս բանը տարակուսումէ, թէ ինչ է պատճառ, որ մինչև հիմի հոգաբարձութիւնը չէր շինում մի օրինաւոր ուսումնարան այն հողի վերա։ Այժմեան հոգաբարձութիւնը, ասումեն, որ հասկացել է դպրոցիս այժմեան շինութեան անյարմարութիւնը... Մինթէ նա էլ անուշադիր կը լինի մեր հասարակական կարծիքի բողոքող ձայնին... Չենք կարծում։

* *

Մեզ գրումեն Բագուից որ քաղաքիս Մարդասիրական ընկերութեան խորհրդական անդամոց պաշտօնակատարութեան երեք տարվայ ժամանակը այս 1873 թիւ յունվարի ամսին վերջանում է։ Համաձայն 17-որդ յօդվածի Բարձրագոյն հաստատեալ կանոնադրութեան խորհրդական անդամներ պարտաւոր են հրաւիրել ընկերութեան բոլոր անդամներին, որ ընդհանուր ժողով կազմեն՝ նոր նախագահ և խորհրդական անդամներ ընտրելու։ Ժողովը կը հաւաքվի Բագուի մէջ յունվարի 25-ին։

* *

Դուրս եկաւ Թիֆլիսում նոր ռուս լրագրի Тифлисскій Вѣстникъ առաջին համարը։ Խմբագիրը պ. Իշխ. Բէբութովն է։

* *

Պ. Լրիցովի Кавказская Старина ամսագրի 2-որդ համարը հրատարակվեցաւ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Խօսելով Ֆրանսիայի մասին, մենք յարմար ենք համարում, տարու սկզբում, չը շեղվել նորա քաղաքական օրական հարցերից;

*) Մի քանի տեղերում խաղողի ծառերը թողումեն գետնի վրայ, իսկ Ագուլիսում բարձրացումեն պատուագների՝ սիւներից և ընդ մէջ ու ընդ երկայն ձգած ձողերից չինած մարդահատակ բարձրութեան վրայ։ Դարնան որթերը մաքրումեն անհարկաւոր ճիւղերից և մաքրած ուռիու ճիւղերով կապ-կապում ձողերի վրայ։

**) Խաղողի այս հիւանդութիւնը պատահում է Թիֆլիզում և կոչվումէ թող։ Ասում են որ նա 60 տասն տարի է, որ այստեղ սկսուած է։

Խմբ.

***) Օղի կամ արաղ մեր տեղերում այսպէս են անում։ Խաղոյկի վրայ ամրացրած է մի մեծ թաթաս, որի մէջ ածում են հատած ճեճէն աւելացնելով վրէն մի քիչ ջուր, վրան դնում են մի ուրիշ կաթսայ (խուփ), յատուկ սորա համար չինած, որի դէպի ներքևի կողմանն դարձրած մասը գմբեթաձև է ու ծայրերը փոքր ինչ ոլորուած.—և սոցա միջի եղած բաց տարածութիւնը ցեխում են։ Կրակ արած ժամանակ ճեճէն սկսում է եռ գալ և գոլորշին բարձրանում է դէպի խփի գմբեթը. այստեղ գոլորշին ցրտելով (որովհետև վրէն ջուր է ածած, որ ամեն անգամ երբ տաքանում է փոխումեն՝ միջին չինած խողովակով տաքացած ջուրը բաց են թողնում և տեղը պաղը լցնում) կաթիլ կաթիլ հանդարտ ցած է գալիս և հաւաքվում էն կռացած տեղը, և այստեղից խողովակով թափվում է տակին դրած կճուճի մէջ, որի բերանը ծածկած է լինում, որ չլինի թէ արաղի զօրութիւնը կորչի։